ՌԻԽՏ-2:
ԱՌԱՅԺՄ ԱՆԿԱՏԱՐ ԾՐԱԳԻՐ

«Այնտեղ, որտեղ ես քայլել եմ մտքով,
Որդիս անպայման կքայլի ոտքով...»

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

Այո՝ առայժմ անկատար: Իսկ ծրագիրն իրոք հրաշալի մտահղացման արդյունք է՝ ուխտավորներով անցնել Հովհաննես Շիրազի մատնանշած յոթ սրբավայրերով, այդ վայրերում շաղ տալ Պանթեոնից վերցրած հողը, ոգեկոչել նրա իղձը: Այդ ուխտատեղիներից մեկը Անին է…

Գյումրիի՝ Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարանում պահպանվում է մի ձեռնափայտ, որ պոետին է ուղարկել սփյուռքահայ Պողոս Գուբելյանը: Նա 1966 թվականի հունիսին այցելում է Հայաստան՝ հատկապես Հովհաննես Շիրազին տեսնելու և նրան նվիրելու փղոսկրե ձեռնափայտ: Անհատական պատվերով պատրաստված այդ զարդարուն ձեռնափայտին մակագրված է. «Հիշատակ՝ հայէ մը, մեծ հայուն-բանաստեղծ Հովհ. Շիրազին Պողոս Գուբելեանէ: Սիթրա Լեոնէ Ափրիկէ: 16.6.66թ.»: Այսքանը՝ մակագրած: Իսկ բանավոր՝ «Սիրելի Շիրազ, վերջապես պատիվ ունեցա անձամբ հանդիպելու Ձեզ՝ մեծանուն պոետի հետ: Մաղթանքս է, որ իրական դառնա Ձեր բաղձանքը՝ բարձրանաք Մասիսն ի վեր, և այս անթացուպը ձեզ նեցուկ լինի»:

Երբ ծրագրվում էր «Յոթ բուռ» միջոցառումը, որը փաստորեն ուխտավորների մի նոր ճամփորդություն է Հովհաննես Շիրազի մատնանշած վայրերով, նախատեսված էր մի ամբողջ արարողակարգ. Հովհ. Շիրազի հուշատուն-թանգարանի բակում կազմակերպվում էր շիրազյան պոեզիայի ասմունքի ցերեկույթ, որի ավարտին հնչում էր «Վերջին իղձս» բանաստեղծությունը:

Էլ իմ ոսկի երազը չեք, ով աղջիկներ մրահոն,
Ոչ սեր կուզեմ մահից այս կողմ,
ոչ էլ այն կողմ՝ պանթեոն,
…Էլ չեմ կարող ես դիմանալ
հայոց վշտին մտնակոխ,
Քանզի մի ողջ լեռնաշխարհից
հազիվ մնաց մի բուռ հող:
Էլ չեմ կարող, ինձ այրեցեք,
բայց մոխիրս բուռ առ բուռ,
Տարեք, ցրեք Հայաստանիս
յոթ կողմերը դեռ անդուռ,
Առաջին բուռն համասփռեք
կրծքին բանտված Մասիսի,

Որ խառնվեմ իմ մեծ սրտին,
հովանա սիրտն իմ հույսի,
Թե չէ այսպես՝ ինչպես գառին
հեռու կապեն մոր մոտից,
Թե չձուլվեմ Արարատին՝ ես կմեռնեմ կարոտից...
Երկրորդ բուռը լուռ շաղ տվեք
մայր Արաքսի սրտի մեջ,
Որ հովանա մոխրիս մեջ էլ

կարոտավառ սիրտս խեղճ:
Երրորդ բուռս փարեք ցրեք Ղարաբաղիս լեռներին,
Որ մուրազի ծաղկունք դառնամ
պանդուխտ հողիս ձեռներին:
Սրտիս մոխրի չորրորդ բուռը
փարեք ծովակն իմ Վանա,
Որ կարոտից մեռած սիրտս կենդանանա, հովանա:
Հինգերորդ բուռն՝ իմ Տարոնի
դաշտերի մեջ շաղ տվեք,
Որ հինգ հազար դարեր բախտ
մոխրիս մեջ էլ սիրտս հեգ:
Վեցերորդ բուռն հույսով փարեք,
սերմեք Սասնա սարերին,
Որ նոր Սասնա էպոս դառնա՝
հառնի գալիք դարերին...
Յոթերորդ բուռն իմ մոխրի՝
որպես փյունիկը սրտիս՝
Դուք շաղ տվեք հազարագանձ ավերակում Անիիս,
Որ մոխիրս շաղախ դառնա, իղձերս կամարվեն,
Վեր գմբեթվող Անիիս մեջ
հայ կանթեղներս վառվեն...

Բանաստեղծության ավարտին թանգարանից դուրս էր բերվում ձեռնափայտը և հանդիսավորապես հանձնվում էր ուղտավորների առաջնորդին՝ բարեմաղթանքով, որ գոնե այս կերպ ինչ-որ չափով կկապարվի պոետի վերջին իղձը:

...Համբերենք և սպասենք մեր գալիք այցին, հետո էլի նոր այցելությունների, մինչև որ…




*Շարունակելի*